ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆԵՐԱՌՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ, «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ

Հայաստանի Հանրապետություն, 0002, ք. Երևան, Ամիրյան 23/1:

Հեռ.՝ (374 10) 510910, 8686

Ֆաքս՝(374 10) 538904

E-mail: bank@aeb.am

Էական փաստերը և տեղեկությունները ներառող հաշվետվություն թիվ 14, 17 հոկտեմբերի 2023թ.

տեղաբաշխված արժեթղթերի դասը՝ սովորական բաժնետոմս (բաժնային արժեթուղթ) և արտոնյալ բաժնետոմս (բաժնային արժեթուղթ)

արժեթղթերի քանակը՝ սովորական բաժնետոմս՝ 10,008,550 արտոնյալ բաժնետոմս՝ 424,600

արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝ սովորական բաժնետոմս՝ 2,080 ՀՀ դրամ արտոնյալ բաժնետոմս՝ 15,000 ՀՀ դրամ

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ խորհուրդը 16.10.2023թ. կայացած խորհրդի նիստում որոշում է կայացրել.

I. Բաժնետոմսերի 21-րդ թողարկման բաժանորդագրության գործընթացի սահմանված ժամկետից շուտ՝ 13.10.2023թ., ավարտման արդյունքում տեղաբաշխված 454,546 հատ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետոմսերը ներկայացնել ցուցակման «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ում:

II. 2023թ. նոյեմբերի 30-ին հրավիրել Բանկի բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողով հետևյալ օրակարգով՝

1. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի հեռակա քվեարկությամբ արտահերթ ժողովի հաշվիչ հանձնաժողովի մասին:
2. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ նոր խմբագրությամբ Կանոնադրության հաստատում՝ «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետոմսերի 21-րդ թողարկման բաժանորդագրության արդյունքներով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրական կապիտալը 28,132,239,680 ՀՀ դրամ կազմելու վերաբերյալ:
3. ««ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման» կարգի վերաբերյալ:
4. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Խորհրդի կանոնակարգի վերաբերյալ:

III. ՈՒԺը կորցրած ճանաչել 23.08.2023թ.-ի՝ «Հորիզոն Թրաստ» ՓԲԸ կանոնադրական հիմնադրամում 7.6923 տոկոս մասնակցություն ձեռքբերելու վերաբերյալ խորհրդի որոշումը:

IV. «Ես եմ» ՓԲԸ կանոնադրական հիմնադրամում ձեռքբերել 8.34 տոկոս մասնակցություն:

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ **ԱՐՏԱԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ**